ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **Անունը ազգանունը** ՝ Վահե Գրիգորյան
2. **Զբաղեցրած պաշտոնը՝** ՀՀ կառավարությանն ենթակա միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեի նախագահի տեղակալ
3. **Գործուղման վայրը/ժամկետը՝** Վիեննա, Ավստրիայի Հանրապետություն, 2022 թ. հունիսի 26-ից հուլիսի 1-ը
4. **Հրավիրող կողմը՝** Ատոմային Էներգիայի Միջազգային Գործակալություն (ԱԷՄԳ)
5. **Գործուղման նպատակը՝** Մասնակցել «Աշխատած վառելիքի անվտանգ կառավարման և ռադիոակտիվ թափոնների անվտանգ կառավարման մասին» համատեղ կոնվենցիայի շրջանակներում ԱԷՄԳ-ի անդամ պետությունների կողմից ներկայացված ազգային հաշվետվությունների 7-րդ դիտարկման աշխատանքային հանդիպմանը
6. **Քննարկված թեմաները – Հանդիպման ընթացքում քննարկվել են.**
   - «Աշխատած վառելիքի անվտանգ կառավարման և ռադիոակտիվ թափոնների անվտանգ կառավարման մասին» համատեղ կոնվենցիայի շրջանակներում կազմված ՀՀ ազգային հաշվետվությունը:
   - «Աշխատած վառելիքի անվտանգ կառավարման և ռադիոակտիվ թափոնների անվտանգ կառավարման մասին» համատեղ կոնվենցիայի շրջանակներում ԱԷՄԳ-ի անդամ պետությունների կողմից ներկայացված հարցերը և պատասխանները:
   - Նման միջուկային ծրագիր ունեցող երկրներում աշխատած միջուկային վառելիքի անվտանգ կառավարման և ռադիոակտիվ թափոնների անվտանգ կառավարման մասին մոտեցումները :
7. **Հանդիպումներ, ելույթներ, բարձրացված կամ քննարկված հարցեր**

   Իմ կողմից ներկայացվել է՝ «Աշխատած վառելիքի անվտանգ կառավարման և ռադիոակտիվ թափոնների անվտանգ կառավարման մասին» համատեղ կոնվենցիայի շրջանակներում կազմված ՀՀ ազգային հաշվետվությունը :

   Ներկայացվեցին նախորդ հանդիպման ընթացքում արձանագրված մարտահրավերների ուղղությամբ իրականացված միջոցառումները:

   Հանդիպման ընթացքում քննարկվեցին.
   Աշխատած միջուկային վառելիքի կարճաժամկետ և երկարաժամկետ կառավարման ՀՀ ազգային հայեցակարգը: Ներկայացվեց ՀԱԷԿ տարածքում նախատեսվող «Աշխատած միջուկային վառելիքի չոր պահեստարանի» ընդլայնումը, արձանագրվեց որ այդ ուղղությամբ

խնդիրներ և ժամանակացույցից շեղումներ չկան: Առաջարկվեց հստակեցնել աշխատած միջուկային վառելիքի վերջնական կառավարումը, եթե այն չի ճանաչվում որպես թափոն:
ՀԱԷԿ շահագործումից հանման հատուկ ֆոնդը և նրա համալրման ծավալները և մեխանիզմները: Առաջարկվեց ջանքեր գործադրել ֆոնդի համալրման ծավալները մեծացնելու ուղղությամբ, որը համարժեք կլինի շահագործումից հանման աշխատանքների ծավալներին:
Տիրազուրկ ռադիոակտիվ աղբյուրների որոնման, հայտնաբերման, արձագանքման և մեկուսացման աշխատանքներում ներգրավված գերատեսչությունները, նրանց պարտավորությունները և լիազորությունները և համապատասխան իրավական դաշտը: Առաջարկվեց մշակել բարձր ակտիվությամբ ռադիոակտիվ աղբյուրների մեկուսացման և անվտանգ կառավարման վթարային հրահանգներ:

ՀՀ հետ միևնույն խմբում ներառված երկրների զեկույցներից բացի մասնակցել եմ նաև Սլովակիայի, Ուկրաինայի և Վրաստանի զեկույցների ներկայացմանը և քննարկմանը:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը**

Հանդիպման արդյունքները՝ քննարկված հարցերը, մարտահրավերները, անվտանգության բարձրացման նախատեսվող միջոցառումները, ինչպես նաև առաջարկությունները և «լավ գործունեությունը» (Good Performance) ՀՀ մասով ամփոփվել են «Երկրի հաշվետվության» մեջ:
Հաշվետվությունում արձանագրվել է երկու «լավ գործունեություն» (Good Performance)
Ս.թ. հուլիսի 4-8 աշխատանքների հիման վրա կկազմվի նաև «Երկրների խմբի հաշվետվություն», որտեղ կամփոփվեն ՀՀ հետ միևնույն խմբում ներառված երկրների զեկույցների քննարկման արդյունքները, ինչպես նաև «Աշխատած վառելիքի անվտանգ կառավարման և ռադիոակտիվ թափոնների անվտանգ կառավարման մասին» համատեղ կոնվենցիայի շրջանակներում ԱԷՄԳ-ի անդամ պետությունների կողմից ներկայացված ազգային հաշվետվությունների 7-րդ դիտարկման աշխատանքային հանդիպման հաշվետվություն:

Քննարկման արդյունքների հիման վրա ՀՀ համար արձանագրվեց հետևյալ մարտահրավերները"

- Ազգային իրավական դաշտը մոտարկել ԵՄ դիրեկտիվների հետ և ապահովել համապատասխան ենթակառուցվածքների առկայություն,
- Վերանայել ՀԱԷԿ շահագործումից հանման ծրագիրը,

- Լուծել շահագործումից հանման ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հավաքագրման խնդիրները,
- Ստեղծել թափոնների կառավարման ազգային օպերատոր՝ համապատասխան մարդկային և ֆինանսական ռեսուրսներով,
- Մշակել բարձր ակտիվությամբ ռադիոակտիվ աղբյուրների մեկուսացման և անվտանգ կառավարման վթարային հրահանգներ,
- Հստակեցնել աշխատած միջուկային վառելիքի վերջնական կառավարումը, եթե այն չի ճանաչվում որպես թափոն:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձեւը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Ներկայացված մարտահրավերները վերաբերում են ինչպես ՀՀ միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեին, այնպես էլ ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը, «ՀԱԷԿ» ՓԲԸ և «Ռադիոակտիվ թափոնների վնասազերծում» ՓԲԸ:

Առաջարկում եմ ուսումնասիրել Սլովակիայի փորձը ռադիոակտիվ թափոնների ազգային օպերատորի ստեղծման, «աղտոտողն է վճարում» սկզբունքի ներդրման, վերամշակման տեխնոլոգիաների ներդրման և մերձմակերեսային գերեզմանոցի կառուցման առաջավոր փորձը:

Առաջարկում եմ ուսումնասիրել ռադիոակտիվ թափոնների կառավարման Վրաստանի փորձը, որտեղ միջազգային ծրագրերի աջակցության շնորհիվ կառուցվել են նոր պահեստարան և մերձմակերեսային գերեզմանոց:

Վահե Գրիգորյան
06/07/2022թ.